

ԶԱՊԵԼ ԵՍԱՑԱՆ

ԱՎԵՐԱԿՆԵՐՈՒՆ ՄԵՋ

Պատարագը

Առաջին Կիրակին էր, որ պիտի անցնեինք Ադամայի մեջ. հազիվ թե լուսցած՝ արկած-լալներու բազմությունը խոնված էր եկեղեցիի բակին մեջ: Գլխիկոր ու հուսաբեկ, ձեռքեր-մին ծալած կուրծքերմին վրա՝ այրիներու շարքը, դանդաղորեն ու երկչոտ քայլերով կդի-մեր դեպի եկեղեցին, որովհետև Պատրիարքական պատվիրակ Գնել Ծ. վարդապետ խոս-տացեր էր Պատարագ կատարել մեռյալներու հոգեհամզատին ու սգավորներու մխիթա-րությանը համար: Մեծ հուզում մը կսավառներ դժբախտ ժողովուրդին վրա, որովհետև ըն-դարմացած ցավը առաջին օրերու ուժգնությամբ արթնցեր էր իրենց սրտերում մեջ և ամեն մեկ գլուխ քամի մը մեռել ուներ լալիք: Խարխափող գավազաններու աղմուկը կտնտնար բակին քարերում վրա և պառավ կույրերը, ճակատին երկնքին դարձուցած, ակամջմին սրած ամենափոքրիկ շշուկին՝ կերթային դեպի խոստացված մխիթարությունը:

Ավերված ու քանդված քաղաքին մեջ միայն կանգուն մնացած Հայոց առաջնորդական եկեղեցիին բարձր աշտարակը կարծես կմայեր իր շուրջի ավերակներում. ու զանգակը համարացած՝ կկախվեր հոն անդամալույծ լեզվի մը պես, որովհետև աղետի օրեն ի վեր ա-նոր տխրագին կամ ցնծուն դողաճեցները լռեցուցեր էին սուգի համար: Երբ մենք մտանք ե-կեղեցի, Պատարագը սկսած էր արդեն: Խուռն բազմություն մը, գրեթե բոլորովին կազմ-ված այրիներեն և որբուհիներեն, կլեցներ տաճարը, գավիթներն ու վերնատունը: Ծերմակ քողերու ու լաչակներու մերքև ծածկված էր այդ սգավոր գլուխներու անվերջ տողանցումը, որը փոթորկալի վետվետում մը ուներ: Ցնցոտիներով ծածկված, խղճալի և թշվառ կանա-ցի ամբոխին մեջ՝ այրիները ցանցառ բացառություն մը կկազմեին: Մեծ մասով անդամա-հատ ու խեղանդամ, այս վերջինները սեղմված էին դասին ետևը. իրենց ամեն մեկ շարժու-մին հականեխականներու բարկ հոտը կը սպրդեր վիրակապներու մերքենն ու կհիշեցներ դեռ չբուժված վերքերը ու այն օրերում, այն սև օրերում թափված արյունը... դժգույն ու դո-ղահար, անարյունացած իրենց ստացած վերքերենն ու անկե ի վեր կրած չարչարանքներեն, անոնք ավելի տխուր ու հուսաբեկ քան այրիացածները, լոին ու չոր ու տենդոտ աչքերով կհետևեին արարողության:

Անսահմանելի խռովք մը կթրթռար մթնոլորտին մեջ: Խուռնի թանձր ծվեմներ կբարձ-րանային ու հետզհետե անոսրանալով կծածանեին ու կքողարկեին եկեղեցիին ձեղումը. երկու կողմերեն պատուհաններեն եկող լույսը սարսափի տմուկ ցուլ մը կստանար խառն-վելով այդ բուրումնավետ ամպերում, և երբեմն ժողովուրդը կծածկվեր խորհրդավոր կես մութի մեջ ու պատարագվորին ձայնը դողդոջուն ու կրոնական հրալույսով մը լեցուն՝ կբարձրանար համրորեն հույլ ու նվիրական ելևէջումներով այդ արկածյալներու ամբոխին վրա, որ հազիվ կխեղդեր իր հեծկտանքը:

Կանգնած էին խստադեմ ու տխուր քահանաներ, ամենքն ալ մեյ մեկ աղետյալ՝ հրաշքով ազատված ու ապաստանած հոդ: Անոնց արևակեզ դեմքերը շրջանակված էին ճերմակ մորոքներով և անոնց մթին աչքերը դեռ պահած էին արհավիրքի և սարսափի արտահայտությունը՝ երբ բազկատարած կիեռներին աղոթքներում: Հոն էր Ատանայի փոխառաջնորդ Տեր Արսեն քահանան իր փղձկաց դեմքով և ցավոտ աչքերով, պատրաստ ամեն րոպե արտասվելու. հոն էր Տեր Սահակ քահանան, արի ու վես կանգնած, իր սակավապետ ու խորհրդավոր երևույթով և որում բազուկները դժկամակելով աղոթքներու համար բարձրանալու, - սքեմի սև ծալքերու ճերքներ և կարծես դեռ ինքնապաշտպանության օրերուն հրամանները կուրվագծեին: Հոն էին նաև տարբեր եկեղեցիներու պատկանող եկեղեցականեր, ամենքն ալ հավաքված Լուսավորչի բազմաշարչար եկեղեցիի մեջ, վերջին մարտիրոսներու հոգիներու հանգստյան համար իրենց աղոթքը ըսելու և եղբայրանալու այն մեծ և անսահման վշտի արտահայտության մեջ: Այդ պատկերը կհիշեցներ քրիստոնեության առաջին դարերը. ուխտվածներու ու զոհվածներու թափած արյունի հետքերը դեռ խոնավ էին ու անոնց հոգին էր, որ կարծես կծփար ծածանող խունկի ալիքներու մեջ:

Որչափ ատեն որ ժողովուրդը ինքզինքը բռնեց, որքան ատեն որ հեծեծմունքներն ու հառաչանքները խեղդված մնացին իրենց կուրծքերում մեջ, կարելի եղավ հետևիլ կրոնական արարողության... երբեմն ցավի ու վերհիշումի սարսուռ մը կալեկոծեր սգավոր ամբոխը... երբեմն ալ մոլեռանդ տենչանքը խաղաղության ու հանգստի, կիսյալատակեր աչքերում մեջ... Այդ բյուրավոր մայվածքներու մոգությունը հետզհետե ցավագին զգայնություններով կտանջեր մեզ. այդ պահում էր, որ պատարագավորը ժողովուրդին դարձած խաչակնքելու միջոցին մեջ ըսավ:

- Խաղաղություն ամենեցուն...

Օհ այն տենչալի հառաչանքը, որով այդ սփոփարար խոսքերը ընդունվեցան. ժողովուրդին զանգվածը իր հիմեն դրոշեցավ ու արցունքները հոսեցան մեղմորեն այտերու վրա. ու այդ խաղաղության բաղձանքը ոչ թե միայն այդ թուպեին համար էր, ոչ թե այդ որոշ մարդկային բեկորին համար՝ այլ անկիս կհնչեր բարձր ու անդիմադրելի, դարավոր տառապանքին տակ կքած ու հալածանքի ուրվականներեն մոլորված Ցեղին համար:

Պատարագը կհառաչանար. աղոթքներու և շարականներու մեղեդիներեն օրորված մտածումս կսլանար դեպի հեռուները, դեպի ապրված անցյալի սև օրերը. ինքզինքս լքած ցավի ալքերում, կզգայի անհատականությանս աստիճանաբար նվազիլը հավաքական տառապանքին մեջ. մոր ձայն մը կհնչեր հոգիիս մեջ ու տաժանելիորեն կզարթնեի մորատեսակ գիտակցության մը... ու այդ պահում էր, որ հաղորդվեցա իմ Ցեղի ճշմարիտ ճակատագրին հետ... այդ պահում էր, որ վերապրեցա բոլոր այն դժոխային տագնապները՝ որոնք պատմեր էին ինձի և որոնցմե հեռու և օտար մնացեր էի այն օրերում: Նույն այդ եկեղեցիին մեջ... սարսափահար ու հալածական ժողովուրդը հավաքված էր մույն այդ տաճարին մեջ: Այն օրն ալ կինները մեծամասնություն կկազմեին և ամեն անգամ որ հրացանի ձայները կթափանցեր պատերը, չէին գիտեր, թե իրենցմե ո՞րն էր, որ այդ թուպեին կայրիհանար... դուրսը կզարնեին, կզարնեին. աղջիկներ ու կիններ իրենց ճերմակ քողերում մեջ պատանքված մեռելներու երևույթով, մեկ թուպեին մյուսը՝ գույժերու կսպասեին... արյունը կհոսեր: Վերքերնին բաց, միսերնին պատառոտում թշնամիի գնդակներեն, քաղաքը

պաշտպանողներեն ոմամք կուգային կոիվեն ու եկեղեցիի սեմին վրա հոգին կավանդեին, հոն ապաստանած իրենց սիրելիները փնտրելով խելահեղ և վերջին մայվածքով: Մեկ ռուպենն մյուսը սև խուժանին դիմադրող բազուկները կապկսեին, ուրիշներ կդառնային հև ի հև, խեղանդամված ու պալքարելու անկարող, և պետք չկար, որ տեսածնին պատմեին, որովհետև իրենց վատողն սևցած դեմքերուն վրա գրված էր ամբողջ արհավիրքը հուսահատությամբ...

Այդ նույն տաճարին մեջ էր... հրացաններ կորոտային ավելի մերձավոր, ավելի հաճախ... ոգևարներուն հոնդյունները խառն էին անծծներով... կիները դողդոջուն կսեղմվեին՝ տեղ տալու վերադարձողներուն և իրենց պաղատող մայվածքները իզուր կկառչեին սուրբերու և սրբուհիներու պատկերներուն...

Ինչո՞ւ ամոռք, որոնց գործությանը հավատացեր էին միշտ, անկարեկիր ու ցուրտ կմնային իրենց տառապանքին, ի՞նչ անծծ ու ի՞նչ պատիժ տնօրինված էր իրենց համար... ո՞ր կուտակված մեղքերու քավությանը համար էր... Հանկարծ լուսավոր շառագույն հայտնություն մը երևաց պատերուն վրա... կրակի տվին, քաղաքը կայրեր, ամեն բան կորսված էր: Հետգիտես ավելի մոտ հրացանները կգարնեին ու գնդակները սուլելով կանցնեին եկեղեցիին պատերու վրայեն: Օգնություն, օգնություն, ով Աստված... Բոցերը կպատեն ամեն կողմ, օճախները կքանդվին, հրացանները կորոտան ու հաղթական թշնամիին ամբոխը մոտ է ու ամեն կյանք պլպլացող լույսին մը պես անոր չարագուշակ շունչը կզգա իր վրա:

Այդ ռուպեին սպիտակափեր ու ծերունի քահանա մը, տարիքեն դողդոջուն սրունքները ամրացնելով կերևա ժողովուրդին, ձեռքերը կբարձրացնեն... «Մտիկ ըրեք, մեռնելու ժամը հասած է, Տերն Մեր Հիսուս Բրիստոս... սուրբը սուրցած են մեր պարանոցներուն համար և դահիճները ոգևորված են մախճիրի արբեցութենեն, ու արյունը պահ մը ետքը ձեր երակներուն մեջ չպիտի մնա... խոնարհեցեք ձեր գլուխները և արձակում խնդրեցեք ձեր մեղքերուն համար... վերջին ժամը հնչած է ու Աստծո ողորմությունը անսահման...»:

Հրացաններուն խլացուցիչ աղմուկին և դուշմանի մոլեգին աղաղակներուն մեջ, պահ մը ծերունի քահանայի ձայնը կմարի, բայց անիկա կերկերածայն կշարունակե թողություն արտասանել խոնարհած ժողովուրդին վրա:

Բոցավառված երևակայության մեջ կշփոթվի այն օրը և այս օրը, որովհետև դարձյալ ժողովուրդը խոնարհած է և ինկած է գետնին, հնձված հասկերու նման. խորանին մեջ, պատարագավորին ձայնը սլացավ. «Խոնարհեալ երկիտի երկիրպագանեմ»:

Ծակատնին գետնի քարերուն զարնելով, քամակը կորացուցած ժողովուրդը, կրոնական սարսուռն մը թրթռում՝ իր ցավը մոռցավ... ու մխիթարությունը ճերմակ աղավմի մը պես ռուպե մը սավառնեցավ իրենց արցունքն աղոտցած աչքերուն առջև... Բուրվառները կճոճեին ծեծծեքալով և խուճկի ծվեմները կթանձրանային ու երբ գլուխնին բարձրացուցին՝ արցունքը ավելի առատ կհոսեր տանջված դեմքերու վրա:

Բայց երբ ետքը պատարագիչը արտասանեց գերագույն մաղթանքը. «Հանգիստ ուկորներուն Կիլիկիո մահառակաց, արանց ու կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսանաց». սգավոր ժողովուրդին հուզմունքը այնպիսի աստիճանի հասավ, որ բարձրածայն հեծկտանքներու մեջ խեղդվեցան աղոթքի ձայները... Անսահման վշտեն ավելոծ-

ված ամբողջը սկսավ աղաղակել. երբեք կարելի չէ երևակայել այն կատարյալ ու ցավազին ներդաշնակությունը, որ ինքնին հառաջ կուգար և որ հոգեհանգստյան աղոթքին միանալով՝ զայն կամբողջացներ. պահ մը միայն լավեցավ ողբ ու հեծեծանք, մինչ ծերունի քանաճակներում խոսքի ու թավ ձայնը կպատասխաներ այդ ցավազին աղաղակներում, հնամենի աղոթքներու նվիրագործված բանաձևերով ամոքելու համար այդ այրող ծավը, որ ամեն մեկում սիրտը կբզկտեր:

Այդ մեկ օրվան, մեկ տարվան, մեկ դարու ցավ չէր, որ կարտահայտվեր, կարծես գերբնական ու հազվադեպ ճիգին մեջ ծեղին տառապանքը կբաբախեր ուժգնությամբ... ամեն մեկ հառաչանքով ծամածռած շրթունքե կհայտնվեր հավաքական ու անձնական սուգը, անմխիթարելի ու անդարմանելի սուգը Ազգին...

Պատարագեն ետքը ժողովուրդը գլխիկոր և կրած հուզմունքեն խոնջած՝ ցրվեցավ, բալին մեջ դանդաղելով ու խոսքեր կազմելով. շատեր լուռ կմնային, կզակնին լաչակով կապած դրսեցիներ ու ճերմակ քողի տակ ծածկված կիլիկեցիներ, ցնցոտիներու մեջ հազիվ սքողած իրենց վտիտ անդամներու մերկությունը, մտազբաղ կհետևեին իրենց արյունոտ Հիշատակներում...